ՀԱՂՈՐԴՈՒՄ

Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. բյուջեի I եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ

Համայնքի 2019 թ. վարչական բյուջեի I եռամսյակի եկամուտները տարեկան պլանի նկատմամբ կատարվել են 26.3%-ով՝ 590221.0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց մուտքերը կազմել են 150259.4 հազ. դրամ:

Սեփական եկամուտները կատարվել են 26.3 %-ով, 263547.2 հազ. դրամի դիմաց կատարվել է 69346.1 հազ.դրամ:

Սեփական եկամուտներից ՝

գույքահարկի մասով 69201.2 հազ. դրամ, առաջադրանքի դիմաց հավաքագրվել է 22041.7 հազ. դրամ կամ կատարվել է 36.0%-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը 11624.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 3452.6 հազ. դրամ կամ կատարվել է 29.7%-ով:

Պետական տուրքերը կատարվել է 27.2%-ով՝ 13000.0 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 4059.7 հազ. դրամ:

Տեղական վճարները պլանավորված 98823.0 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 18707.1 հազ. դրամ կամ կատարվել է 18.9 %-ով, տեղական վճարներից աղբահանության վճարները կատարվել է 15 %-ով կամ 44640.0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց գանձվել է 6820.2 հազ. դրամ:

2019 թ. համայնքի վարչական բյուջեի ծախսերը տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 21.1 %-ով՝ 590221.0 հազ. դրամ առաջադրանքից կատարվել է 124558.7 հազ. դրամ, որից՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 19.2 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 16.6 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 20.3 %-ով:

Հանգստ, մշակույթ և կրոն դասակարգումով նախատեսված ծախսերը կատարվել է 18.5%-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 24.8 %-ով:

Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 19.4 %-ով:

2019 թ. համայնքի ֆոնդային բյուջեում նախատեսվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարումից մուտքեր 25236.0 հազ. դրամ, որից փաստացի մուտքերը

կազմել է 12448.9 հազ. դրամ, ուղղակի վաճառքով գույքի օտարումից փաստացի մուտքերը կազմել է 246.1հազ. դրամ:

Աշխատակազմի ղեկավար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան